

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Թիֆլիսում գրվում են իւրաքանչիւր տարեկան (Բաղրամյայա և Բարձրակապ փողոցի. անկիւն):
Ուրիշ բաղրամյայի պէտք է գրվել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „Mschak“.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Նոր կարգադրութիւն. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Իրաւաստութեան դոնոր. Հայոց ներ-
կայացումները Բաղրամյայա. Նամակ Երևանից. Նա-
մակ Պետրոպոլից. Նամակ Ներքին-Ախտայից. Նա-
մակ Ռազմարմիայի. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պարտական ժառանգութիւն. 4. Պոլսից մեկ-
նելը. Փաշոյա. Նամակ Իտալիայից. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌՈՒ-
ԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՈՒՄ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. 4. Պոլսից:

ՆՈՐ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր տարի
Ռուսաստանի նահանգապետները ներկայա-
ցնում են Թագաւոր Կայսրին զեկոչուած
ներ, որոնց մէջ նրանք տեղեկութիւններ
են տալիս նահանգների վիճակի մասին:
Այդ տեղեկութիւնները յաճախ լինում են
համառու և ձեական և զայափար չեն
տալիս տեղական կարիքների մասին: Այդ
պատճառով Բարձրագոյն հրամանով
կարգադրված է, որ այսուհետև նահան-
գապետական զեկոչումները կազմվեն ա-

ռանձին խնամքով և նրանց մէջ պարզված
լինեն թէ տեղական կարիքներին ինչ
ձևով են արտայայտվում, թէ ինչ աղ-
բիւրի է դիմել արմիստարացիան այդ
կարիքներին բաւարարութիւն տալու և
թէ առհասարակ ինչ միջոցներ են ձեռք
առնված նահանգում տեղական հարցերը
մշակելու համար:

Ներկայ նշանաւոր բարեփոխութիւնը, որ
մտնելով է պաշտօնական զեկոչում-
գրերի մէջ, ունի կրկնակի կարեւորութիւն,
որովհետև նախ այդ զեկոչումները անմի-
ջապէս հասնում են Գահին և ենթարկ-
վում են նրա յատուկ ուշադրութեան և
երկրորդ նրանց կազմելու համար իրաւ որ
անհրաժեշտ է ուսումնասիրել տեղական
կարիքները և նրանց բաւարարութիւն տա-
լու համար էական միջոցների ձեռնարկել:
Բարձրագոյն կամքը զործնականապէս իրա-
գործելու համար նահանգապետները պէտք
է զործնենքութեան հրաւրին տեղական
բոլոր գործող ոյժերը և կազմակերպեն մի-
շաբր ձեռնարկութիւններ:

Ռուսաստանի գաւառական կեանքը վեր-
ջին տարիները ենթարկվեց այնքան պատա-

հարներ, որ անկարելի է լուրջ ուշա-
դրութիւն չդարձնել տեղական կարիքների
վրա: Անցան և անցնում են այն ժամա-
նակները, երբ ժողովուրդն ապրում էր ա-
ռատութեան, բազմահոգութեան մէջ և
ունէր սակաւ պահանջներ: Այժմ նուա-
զել են նախկին տնտեսութեան աղբւրները,
իսկ կարիքները շատացել են: Անգրկովկասը,
որ դեռ մի քանի տասնեակ տարիներ ա-
ռաջ վայելում էր զէն ու բօք երկրի յար-
մարութիւնները, այժմ այլ ևս բացառու-
թիւն չէ կազմում և ենթակա է ընդհա-
նուր անվերելար վիճակին: Ահա՛ այդ
պատճառով շատ ուշադրութիւն է, որ Բարձր
խնամութիւնը ինքը հրաւեր է կարգում
տեղական կարիքների վրա առանձին ուշ-
ադրվել և նրանց բաւարարութիւն տալու
վճարական քայլեր անել:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՒՐԱՀԱՆՏՈՒԹԻՒՆ ԶՈՀԵՐ

Նախալին բաղադրում վերջին ամիսները,
ինչպէս յայտնի է, սուսնի նման սկսել են բուս-
նել բազմաթիւ ակցիօնէրական ընկերութիւն-
ներ, որոնք հշուտով հարստանալու և աճելու
օգուտներ ձեռք բերելու շուայ խոստումներով
կարողանում են գրաւել միամիտ և դիւրա-
ւատ ժողովուրդը ու կորզել արհեստագործ, մը-
շակի, բանուորի երկար տարիների խնայողու-
թեան արդիւնքը: Նշանակաւ փառաւոր խոստում-
ներով, վառված շուտով հարստանալու տեն-
չանքով, խեղճ դերձակ, սափրիչ, հիւանդ,
գործակալաւոր, բանուոր, հացալվաճառը տա-
նում յանձնում է ճարտարներին խնայած փող-
րիկ գումարը, առանց կասկածելու հետեանը-
ների մասին, որովհետև «ճարտարները» կարո-
ղանում են հաւատացնել միամիտ ժողովուրդին,
թէ իրանց ձեռնարկութեան մէջ մասնակցում
են յուսալի և վստահելի անձնաւորութիւններ,

քով Վրէժն կայսրին շատ բարձր է, ուստի նա
կ'ընէ կերտն ալ, բայց չի ծառայէր... կ'ըն-
կերտն ալ՝ կայսեր ոտքին կոշիկները քաշելու
ու մաքրելու համար, գուլպաներն իրմէ վեհա-
գունին թողով:

Կը յիշենք որ մայրաքաղաքի «Ճէրիդէի Նար-
գիէ» թրքախօս հայախառ թերթի խմբագրի
տնօրէն՝ Տիգրան ձիվէլեկեան «Սուրհանդակ»
ամսուհով ամենօրեայ հայերէն թերթ մը պիտի
հրատարակէր, որուն առաջին թիւը պիտի երե-
նար սեպտեմբեր 15-ին՝ այն արտօնագրին հա-
մեմատ, որ կայսերական իրաւէով տրուած էր
արդէն հասարակաց կրթութեան նախարարու-
թեան կողմէն:

Այժմ այդ թերթի հրատարակութիւնն իս-
րաւ վերջացաւ՝ առանց սկսած լինելու, և ձի-
վէլեկեան հարցաւորութեան ենթարկուեցաւ
այն պատճառաւ, որ նա, սուր, հան, դակ
բառերով կուզէ եղբր ժողովրդեան միտքերը
զրգուել, որովհետև «Սուրհանդակ» կը նշանա-
կէ եղբր—սուրը հանէ թաղմը բլէ *): ձիվէ-
լեկեան հարցաւորութեան պահուն հազիւ կը
յաջողի համոզել հարցաւորին պաշտօնէին, թէ
«Սուրհանդակ» լուր տանող, կամ բերող
ըսել է բառին ամենապարզ նշանակութեամբ՝
բառ մը զոր ամեն լրագիր, առհասարակ կը
գործածէ՝ իր տալիք լուրերուն իբր կերպով,
օրինակի համար՝ «գաւառական Սուրհան-
դակ, երօպական Սուրհանդակ, և այլն»:
ձիվէլեկեան, վերջապէս, կարողացաւ իր օձիքն
ազատել գրաւորիչ պաշտօնէութեան Բարեւո-
նեան սոցիալականութենէն, սակայն պատիժը
«Սուրհանդակ»-ը կրցց, վասն զի ցկեանս ար-
տորուեցաւ այդ բառը հայկական բառարանէն.
Թող թէ «Սուրհանդակ» չը պիտի հրատարակվի,

*) «Թագմը ընէ», այսինքն ածել սուրը, քօտի,
և այլն, տալիքը թագմը, քօտի, քօտի, քօտի, քօտի,
դեղին ուսումնասիրութեան... մինչ ցար Արգիւ-
նայիցէ գառ ու վեցերէս է այդպիսի ճարտարութեան
ունենալ տեղեկութիւն մէջ...

նշանաւոր կապիտալիստներ: Վերջիններն էլ
շատ անգամ չեն խղճարարում և թող են տա-
լիս ճարտարներին իրանց անունները խաբէու-
թեան և կեղեքեան դիմակ դարձնել:

Այդ բոլոր գործողութիւնը կատարվում է հե-
տեալ կերպով: Երկու կամ երեք հոգի գնում
են մի դեպքում նախաբեր հող, դիւրեք 20,000
ռուբլով, իսկոյն նրանք գնահատում են այդ
հողը 100,000 ռուբլի և կազմում են ակցիօն-
րական ընկերութիւն ու դուրս են տալիս ալ-
ցիաներ 200,000 ռուբլու: Ուրեմն հէնց մի քա-
նի օրվայ մէջ նրանք առանց որ և է աշխա-
տութեան, ձեռք են բերում 80,000 ռ. և բա-
ժանում իրանց մէջ: Ապա կասկածելի բարոյա-
կանութեան տէր ազնիւների միջոցով նրանք
տարածում են աշխատաւոր դասակարգի մէջ,
թէ որպիսի մեծ օգուտներ կարող է տալ նոր
ակցիօնէրական ընկերութիւնը և ինչքան շու-
տով կարելի է հարստանալ՝ ձեռք բերելով այդ
ընկերութեան ակցիան: «Տոսպեցէ» ձեռք բե-
րել—դրուած են գործակալները, ժառանգող
որ սկզբում պէտք է վճարել ակցիայի միայն
10%-ը, այսինքն, եթէ ակցիան գնահատված է
1000 ռ., գնողը կարող է վճարել միայն 100
ռ., իսկ մնացածը կարող է վճարել, երբ կամե-
նայ: Ի հարկէ, զեկոչումները առաջին հոգս
են տանում մէկ կամ երկու ակցիա կապել այս
և այն յայտնի կապիտալիստի, կամ վստահելի
անձի վրին, որպէս զի նրա անունը յիշվի ցու-
ցակի մէջ և շատ անգամ նոյն իսկ ընծայում
են նրան ակցիան: Եւ ահա խեղճ արհեստա-
ւորը, որ երկար տարիների իր խնայողութեան
արդիւնքը—մի փոքր գումար պահած ունի պե-
տական խնայողական արկղի մէջ, չլացած շու-
տով հարստանալու պերպէկտիւնը, շտապում է
հանել իր այդ խնայողութեան արդիւնքը և տա-
նել ակցիա գնել: Այդպիսով ճարտարները հա-
ւաքելով 200,000 հազար ռուբլի, կապում են
պայմանագիր, որտեղ յիշված է լինում, թէ ի-
րանք՝ այդ ընկերութեան հիմնադիրները պէտք
է ստանան տարեկան այսքան հազար ռուբլի

այդ բառն ալ չպիտի գործածուի երբեք: Արդէն
հայ թերթեր՝ այն օրէն սկսեալ, փորձանակ
«Սուրհանդակ» «Թիթաբեր» սկսած են գոր-
ծածել:

ձիվէլեկեան որոշել է հիմա «Բանբեր» անու-
նով թերթ մը հրատարակել, որուն համար խոս-
տացուել է արտօնութիւն շնորհել: «Բանբեր»
որ հոմանիշն է «Սուրհանդակ»-ին, արդեօք Հա-
միդի տեղեկութիւնն ինչպէս պիտի ան աւելի
ընէ... սակայն մենք կը զարմանալք թէ թուր-
քերու այդ բառակրկիտ խալիֆան ինչպէս մի-
շէ հիմա ուշադրութիւն չէ դարձուցել թրքա-
կան խել մը բառերու վրայ, զոր եթէ ի նկատ
առած լինէր, հակառակ իր նրքասիրութեան,
իր անունը շատ տեղի պիտի հնչէր ակնհայտ,
ինչպէս շատ գէշ կը հնչեն Եւրոպ (աստղ),
Մուրադ (փափաք), Ազիզ (սուրբ) և ուրիշ-
ներ՝ որ այս բառերուն հետ առնչութիւն ունին:

Վահան վարդապետ Տ. Մինասեան... Հիմա
պիտի ըսէք թէ կարծեմ այդ մարդուն վրայ
գրել...

Արդարն չը պիտի արժէր, եթէ Վերապետ
Խաչի տօնը փառաւորած չը լինէր իրեն յա-
տուկ վարդապետական շուքով՝ որ է բա-
ռոսաբանութիւն: Վարդապետն ի պատիւ
Քրիստոսի Խաչին՝ այնքան խնայարկեմ է Բարո-
սին, որ եկեղեցւոյ մէջ ինչպիսի ժամկոչն հա-
սեր ու ահալին քանակութեամբ մածուն լեցու-
ցել է բերին մէջ՝ որ սթափիլ ժամկոչը լաւ
կընէր՝ որ ընչ մ'ալ Օրմանահանին վրայ թափէր
այդ մածունէն՝ որ երեսը ճերմակ մնար՝ այդ-
պիսի խայտառակ եկեղեցական մը պաշտպա-
նած լինելուն համար: Կիմանամք թէ վկայական
մ'ալ այս վարդապետին պիտի տայ եղբր՝ եպի-
սկոպոս ձեռնադրուելու համար: Ամապարկելու
է... պէտք է շուտով եպիսկոպոսանայ, քանի
որ Վրիլիկոյ կաթողիկոսը գլխավորէ պիտի
ընտրուի...—բացատրութիւնն ուրիշ անգամ:

Գիւրգի:

առճիկ և 15 կամ 20% ընդհանուր արդյունքից: Այնուհետև հիմնադրվեցին գործը չէ, թէ ինչպէս կը գնայ ձեռնարկութիւնը՝ օգուտ կը լինի թէ փեսայ արդէն ապահովել են իրանց օգուտ լինելու դէպքում, օգուտ մեծ մասը իրանք են ստանալու, որովհետեւ գործի մէջ գրեւ են 200,000 ռուբլիով մի ապրանք, որ իրանց վրա նստել է միայն 20,000 ռ., իսկ երէ շնորհ լինի, առեւելու են ինչո՞ւ անկոնիքները՝ այն հաշիւաւոր արհեստագործները, մշակները, որոնք հաւատարմով չապր խոտուտներին, իրանց վերջին կողմէնքը հաւատարմով են իրանց խղճին, պատուիր թի՛ գծ, պատուիր անմիտ խոսքեր...

Եւ ինչպէս երևում է, Բագուի այդ շանտաժային գործի հեղինակները մի քանի անձինք են, որոնք խումբ կազմելով, զանազան անուններով և ֆիրմաներով, զանազան ակցիոնէրական ընկերութիւններ են հաստատում և լիակարգի մէջ գցում միամիտներին: Հասկանալի է, թէ ինչպիսիք հետեւանքներ պէտք է արտադրեն շանտաժի և դիւրահաւատութեան վրա հիմնված այդ ձեռնարկութիւնները: Բագուում եւ զո՞ղ բոլոր անձանց բարոյական պարտաւորութիւնն է զգուշացնել հասարակութեանը այդպիսի վտանգաւոր առաջարկութիւններից և դիւրահաւատութեան զոհերի առաջն առնելու:

ՀԱՅՈՑ ԵՆԻՎԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՈՒՄ

Բագու, հոկտեմբերի 22-ին
Հայոց դերասանական խումբը դատաւարական էր հոկտեմբերի 21-ին ներկայացնելու Մարտի Ապահարդանի ծաղիկները «Взрывавшиеся цветы» կոչված կոմեդիան: Թատրոնի ղեկավարը հայերենի վերածել էր. Ա. Թատրոնեան: Այդ «թերթ կայցրած» կոմեդիան իր անմիտ բովանդակութեամբ, դարձելով դարձածը ընդհանրապէս լիակատար չէր լինի: Բագուի ղեկավարը, որ իրեն կայարանի համար այդքան հարկաւոր չէ լինի և ուրեմն աւելի լաւ է թողնել լեզուի վարչութեան տրամադրութեանը: Եւ չը նայած որ այդ հոգեւոր մշակում են և քաղաքին՝ առհասարակ իւրաքանչիւր տարի որչա՞նչ եկամուտ բերում, բայց և այնպէս դուռն ուրոյում կայացրեց՝ առաջարկելով երկրորդային վարչութեան վերջինքը քաղաքապետական հոգեւորականներին, որքան հարկաւոր կը լինի կայարանի համար: Դրանով այս որոշումը, որպէս արտայայտիչ մեր ժողովրդի ցանկութեան, ընդունվեց սրբախոսութեամբ: Մի քանի տասնեակ դեռահասակ հոգեւորականներ, բայց երկրորդում կայարանի հարցը աջակցեցինք՝ քաղաքը անհամեմատ և անփութարեւելի օգուտ կը տանայ թէ նրա ղեկավարը և թէ բարոյաւորը:

Եւ ինչպէս համար է հանդէս բերվել այդ կոմեդիան: Մի՞թէ հայկական եւրոպական հասարակական գործերում ևս միշտ առաջին տեղը պիտի բռնի և մենք համարալիցութեամբ սկսված մի կանոնաւոր գործ չը պիտի տանենք մինչև վերջը...
Կոմեդիայի բովանդակութեան մասին կանգ առնել, կը նշանակէ նշանակութիւն տալ ոչ մի ընդհանրութեան չը դիմացող գրուածքի, սակայն այդքան միայն պէտք է ասել, որ Ապահարդանի ծաղիկները անուշ կը լինի աշխատանքի լիակատար ոչ ապահարդանի լիակատար է ծագեցնում և ոչ ապահարդանի հարց պարզապէս, այլ ստոր դիտումներով, առանց որ և է սերի և համակրութեան մի և նոյն կոնցրետ տղամարդու գրիկ է նետում, այն էլ ամենագոհելի և անբարոյական չարժանութիւններով: Եթէ այս բոլորի վրա աւելցնենք դերասաններից մի քանիսի վարքի, դուռն-դուռնները, անուշ և անվախ չարժանութիւններ ու ձեռքը, յամար տեղի ունեցող «կոյտ» ապականարութիւններն ու արքայները, այն ժամանակ մի փոքրիկ գաղափար կարելի կը լինի կազմել այն «բարոյական» դուռնութեան մասին, որ վայելցնի հանդիսականները հոկտեմբերի 21-ին: Սակայն ներկայ հասարակութեան մեծ մասը ոչ միայն դժգոհութիւն չէր արտայայտում ներկայացման ժամանակ, այլ և «կոյտ» ծիծաղում էր, ձիւղ այնպէս, ինչպէս շատ կանայք և օրիորդներ ժամերով ծիծաղում և անդադար հրճուում են, երբ իրանց «օյնիք» կապելները անմիտ և լիկտի անեկոյտներ են պատմում նրանց: Այդպիսի դէպքերում չէնք իրանք՝ այդ նազելի օրիորդները և կանայք չը գիտեն, թէ ինչու են ծիծաղում, բայց ծիծաղում են՝ առանց իրանց հաշիւ տալու, և առանց բարոյական գուարժութիւն զգալու, կը չեղանք մենք: Կոմեդիայի վերջին կցած «Բայալ-Լազոր» խաղը նոյնպէս անաշուք անցաւ, չը նայելով որ գլխաւոր դերն ստանձնել էր չորսալի կոմիկ պ. Տէր-Բալթան: Այդ հասկանալի է: «Բայալ-Լազոր» դերն անցել է. նա այլ ևս հետաքրքրութիւն չէ կարող չարժեք շատ-շատ պատմական նշանակութիւն միայն կարող է ունենալ: «Բայալ-Լազոր» փոխարկվել, ցլիկորաւոր «Зайчик»-ներ են դարձել, այժմ օրանց պէտք է հրապարակ հանել, որ և հետաքրքրի կը լինի, և՛ կենդանութիւն կը ներշնչէ...

Ն. Գաւթեան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 17-ին

Երեւան, քաղաքային տան մէջ, նշանակված էր դուռնային արտակարգ ժողով՝ երկաթուղու կայարանի տեղի առթիւ: Ինչպէս գրեւ ենք, երկաթուղու վարչութիւնը մտադիր էր գլխաւոր կայարանը Երեւան բերելու յայտնի պատճառներով. սակայն շնորհիւ նախագահութեան և դուռնային, որոնք առաջարկեցին քաղաքի աշակերտութիւնը այդ հարցում, երկաթուղու վարչութիւնը որոշեց գիծը տանել Երեւանի վարչական գլխաւոր կայարանը չինել քաղաքի հոգեւոր վրա: Անհայտ պատճառով էլ երկաթուղային վարչութիւնը պաշտօնադէպ զիջել էր նախագահութեան, իսկ նախագահութեան գործը յանձնել էր քաղաքային դուռնային: Երկաթուղային վարչութիւնը հետագոտեւ լիակատար հարաւային կողմում ընկած հարկ տարածութիւնը, որպէս յարմարաւոր տեղ կայարանի համար՝ մասնաւորապէս էր արել երկու տեղի վրա, առաջարկելով ընտրել այդ երկու տեղերից մէկն ու մէկը և որոշել քաղաքի մասնակցութիւնը կայարանի չինութեան վերաբերմամբ: Դրանք քննարկելով այդ հարցը նախ՝ որոշեց տեղը, այն է՝ «Մուսանկով» թափա՝ կոչված, որը աւելի մօտ է քաղաքին քան միւսը, և որը քաղաքի կենտրոնից հեռու կը լինի ոչ աւելի քան չորս վերստ, և երկրորդ՝ կանոնաւոր հողի տարածութեան հարցի վրա, այն է՝ թէ ինչպէս տարածութիւն հող զինել երկաթուղու վարչութեան տրամադրութեան տակ: Առաջարկողներ կային որոշել չափը և տալ 100—150 դեցեատին, բայց առաջարկողներ կային, որ իրեն կայարանի համար այդքան հարկաւոր չէ լինի և ուրեմն աւելի լաւ է թողնել լեզուի վարչութեան տրամադրութեանը: Եւ չը նայած որ այդ հոգեւոր մշակում են և քաղաքին՝ առհասարակ իւրաքանչիւր տարի որչա՞նչ եկամուտ բերում, բայց և այնպէս դուռն ուրոյում կայացրեց՝ առաջարկելով երկրորդային վարչութեան վերջինքը քաղաքապետական հոգեւորականներին, որքան հարկաւոր կը լինի կայարանի համար: Դրանով այս որոշումը, որպէս արտայայտիչ մեր ժողովրդի ցանկութեան, ընդունվեց սրբախոսութեամբ: Մի քանի տասնեակ դեռահասակ հոգեւորականներ, բայց երկրորդում կայարանի հարցը աջակցեցինք՝ քաղաքը անհամեմատ և անփութարեւելի օգուտ կը տանայ թէ նրա ղեկավարը և թէ բարոյաւորը:

Ա. Գաւթեան

ՆԱՄԱԿ ՊԵՏՐՈՎՍԿԻՑ

Հոկտեմբերի 21-ին

Առանձին գնացքով այսօր հասան այստեղ մօտ քառասուն բժշկներ, բժշկուհիներ և գիտական ընկեր, որոնք գնում են Անդրկասպեան երկիրը. նրանք վարձել են «Ապկալ» և «Երկուր» ընկերութեան մի շարքերով I և II կարգի բոլոր տեղերը, այնպէս որ այս երեք օրը այլ ևս ոչ մի տեղ չը լինելով, չզոհեաւային ընկերութեան ուրիշ ծանապարհորդները պիտի մնան այստեղ սպասելով հետեւել շարքերին: Ստիպված լինելով ծանապարհվել այս գիշեր Բագու գնացող միակ շարքերով (Լաւրանի ընկերութեան «Хамид»-ը), որի կապիտալը միւրեքին հինգ դրամ էր թուրք է, և ի նկատի առնելով որ ծովը այս քանի օրը խաղաղ չէ, ցանկացաւ ապահովացնել ինձ «Россия» ընկերութեան մօտ, որի յայտարարութիւնը կախված է այստեղ երկաթուղու կայարանում, աւելցնելով որ տոմսակները տրվում են այդտեղ լրագրաւաճառի բնակարանում: Այնտեղ ինձ ասացին, որ իրանց այդպիսի բան յանձնարարած չէ և իզուր է յայտարարութիւն կախ տված: Կարծում ենք, որ ընկերութեան կողմից լաւ բան չէ այդպիսի յայտարարութեան կախ տալը, որովհետեւ նա չափերին է մտերեւացնում. օրինակ՝ չէնք տղերքի գրքը այդ ի նկատի առնելով էր որ Սովկապապահովագրվեց:

Սովկապի մի գործարանատէր այստեղ բաց է անում չին գործարան 300 բանտրով առ ժամանակ. գործարանը չինելու աշխատանքները շուտով սկսվելու են:

Պետրովսկի մի փոքրիկ քաղաք է՝ շատ անշան փողոցներով և դուռնային տներով ու խանութներով: Բագուից հարաւ կը գնա, ինչպէս սովորական է գաւառական քաղաքներում, չափազանց տարօրինակ նշանակներ: Օրինակ՝ ինչ կանէ հետեւելու մասին, որ մի «Երեւան» վերնագիրն է. «Тифлисский подвалъ, грузинский пивъ-ликъ. Вино, пиво. Аппаратъ-яхиш олъ»:

Եւ ինչ է պահանջը:

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՌՏԱՑԻՑ

Հոկտեմբերի 19-ին

Հոկտեմբերի 15-ին, զինուորական ատենանք

բաց անելով իր նիստը, հրաւրեց Գաղափարային շրջանի նորակոչներին վիճակահանութեան: Դեռ երկու օր առաջ այդ շրջանի 30 քրիստոնեայ զինուորական-երկրամասորդներ Նոյն միասին խանդովել էին ատենանք գումար: Այդ օրերում ատենանքը զբաղված էր խնդրաքննելով և արտօնվածներին ցուցակներ կազմելով: Այնուհետեւ, 15-ին առաւօտեան ժամը 7-ին, երեք ազգութիւններ՝ հայեր, մալականներ և հրեաներ հրապարակաւ մարմնաւոր կատարեցին ատենանքի հանդէպ: Մարմնաւոր անմիջապէս յետոյ, ժամը 8-ին, ամենից առաջ վիճակի ենթարկվեցին մալականներ և յայտնի նորակոչները, թուով 28 հոգի, որոնցից իսկական զինուոր քաղաքից 8 հոգի: Այս ժամը 2-ին վիճակի հրաւիրվեցին հայ նորակոչները, որոնք թուով 298 հոգի էին: Հայերից զինուոր վերցվեց 78 հոգի, որոնց մէջ մասնաւորապէս տարվա զինուորացիներից չափաւ կանոնադրութեան շտաբայինները, թուով 12 հոգի: Պէտք է նկատել, որ համեմատած անցեալ տարիների թվերին, այս տարվայ զինուորները կրկնակի թիւ են կազմում:

Կարեւոր է յիշել այն հանգամանքը, որ հայ նորակոչներից մի քանիսը բոլոր էին յայտնում կամ խնդրաքննելով ներկայացնում Նոյն իսկ վիճակահանութեան միջոցին, երբ ատենանքը, զինուորական կանոնադրութեան համաձայն՝ անկարող էր ընդունել, որովհետեւ բոլորների ընդունելութեան մասին առանձին կերպով յայտարարված է և որչա՞նչ ժամանակավիճեց նշանակված: Այդպիսի դէպքերում, մեր կարծիքով, դիւրակաւ դաւաճանքի և անուշադրութեան պարտաւորութիւնն է օր առաջ զգուշացնել իրանց զինուորացիներին: Կանոնադրութեան իմաստը չը հասկանալով և իր ժամանակին բոլորը չը ներկայացնելով՝ դիւրակաւ, քնամարտիկները կարող են զրկվել նաև իրանց միակ աշխատող անդամից: Հայ զինուորները, բացի 3—4 հոգուց, բոլորը ամուրի էին, մինչդեռ զինուորացիութեան առաջին տարիներում ամուսնացածները մեծամասնութիւն էին կազմում: Այն ինչ մալական զինուորները բոլորը ամուսնացած էին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, հոկտեմբերի 18-ին

Մեր ամառ քանադաճող Բագուի Պատկական մասնաճիւղի համար մեզ մօտ ժողոված կար՝ առ 17 հոկտեմբերի 1897 թիւ 1,410 ռ.: Տոկոս տասնվեց 66 ռ. 98 կոպէկ: Ստացանք 4. Բայալեանից 5 ռ. 4. Բաղդասարեանից 7 ռ., Ա. Բայալեանից 3 ռ., Երազը Թեթեան 5 ռ., Ա. Հալաւանից 1 ռ. 75 կ., պ. Սալթիկեան, Կիրիլեան, Զարիկեան, Կ. և Ս., Չալալեան, Հէրման, Երկրեան, Արաքեան, Մալալեան, Սրաբեան, Գ. Մարք, Դ. Կապ, Մէլիքեան, Երազը Խոջալեան, Տէր-Չալալեան, Կարալեան, Կարալեան, Արաքեան, Արաքեան, Թիլիքեան և Խալալեան մի-մի ռուբլի, պ. Չալալեան և Սրաբեան 50-ական կոպէկ, ուրեմն ընդամենը 46 ռուբլի 77 կոպ, իսկ ընդհանուր գումարը՝ 1,523 ռ. 75 կոպ., որ և դրինք մէկ տարով 5%: Նոր-Նախիջևանի կառավարած վարկի ընկերութիւնը (տոմսակ № 578—17 հոկտեմբերի 1898): Նուէրները խնդրում ենք ուղարկել՝ Нехижеван на Дону Григоріу Чалхшыяну: Մենք կը ցանկայինք գումարը հասցնել գոնէ 3,000 ռուբլու, որպէս զի կարելի լինէր վայելել կառավարան կանոնի բանաստեղծի գերեզմանի վրա:

Գր. Չալալեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, հոկտեմբերի 8-ին

Ատրպատականի Հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է թոյլ տալ «Մշակ» միջոցով յայտնել Ատրպատական ընկերութիւնը Վոլկով Յովհաննէանին, իր խորին շնորհակալութիւնը՝ հարկի ռուբլի նպատի համար, որ պարտքը բարեհաճել էր ուղարկել յօգուտ ընկերութեան արհեստանոցի և մանկական պարտէզի:

Ի դէպ, վարչութիւնը խնդրում է յարգելի ազգայիններից չը խնայել իրանց օգնութիւնն ու նուիրատուութիւնը մի ընկերութեան, որի նպատակն է կրթել Ատրպատականի խաւար միջնորդութեան վրայացող բազմաթիւ տղէտ և աղքատ մանուկներին և տարածել արհեստ (կար ու ձե) իրական սեռի մէջ: Ընկերութեան հասցէն՝ Tauris (Perse), «Société bienfaisante des Arméniennes d'Azerbaïdjan»:

Ի դիմաց վարչութեան նախագահուհի՝

Հեղինէ Ժօրժ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են Վանից, հոկտեմբերի 8-ից, թուէս երեք օր առաջ Վանի փոխ-հրապարտ Մայիկիւնի, թարգման Կարապետ Զինկարեանի և քանի մը ոստիկանների առաջնորդութեամբ:

ապահով կերպով Վան հասան 30—35 զաղմական վանեցիներ:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը պարտաւոր էր մինչև ներկայ հոկտեմբերի 25-ը նոր պայմաններ կապել բելգիական Անտիմ ընկերութեան հետ ձիաբաշի վերաբերմամբ: Եւրոպայի օր, հոկտեմբերի 27-ին, քաղաքային ինքնավարութեան կողմից ընտրված յատուկ յանձնաժողովը վերջացրեց ձիաբաշի դրեկտոր Բօրիկ հետ նախնական և հիմնական բանակցութիւնները: Արձանագրութիւնը երկու կողմից ստորագրվեց և այժմ պէտք է մշակվեն մանրամասնութիւնները: Ֆինանսական մասը խմբագրված է երեք տեսակ, որոնցից իւրաքանչիւրն էլ հաւանելի է բելգիական ընկերութեան: Քաղաքային ինքնավարութիւնը պարտաւոր է երեք ամսվայ ընթացքում ընտրել այդ երեքից մէկը և այդ մասին յայտնել բելգիական ընկերութեան վերջնական պայմանագիր հաստատելու համար:

«Բիւրակն» մէջ կարդում ենք, «Երգրում» մէջ վարժուհի պատրաստելու համար յատուկ դասընթացը մը սահմանված է: Գովելի է այս մասին առաջնորդական տեղադրանք: Զատն վարդապետի աշխատանքը:

Մեզ հաղորդում են, որ Գրեգորիում, Գերմանիայում, ըյտ է տեսել հայ ընթերցողներին ծանօթ Արտուր Լէյնտի նոր աշխատութիւնը՝ «Atmenische Dichter», որը վերաբերում է հայոց գրականութեան:

Ինչպէս յայտնի է, պետական գանձարանը ներկայումս բազմաթիւ վեճեր ունի: Բագուում մասնաւոր անձանց հետ, նախկին հոգեւոր վերաբերմամբ: Այժմ Բագուում ստացվել է տեղեկութիւն, որ երկրագործութեան և պետական կալուածների միջնորդութիւնը, կանոնաւոր վերջինքը այդ վեճերին, որոնք է առաջարկել այն անձանց, որոնց հետ վեճ ունի, կամ գինը վիճելի հոգեւոր, վճարելով գանձարանին 125 հազար ռուբլի ամեն մի դեցեատին հողի համար, կամ պարտաւորվել վճարել 2 կոպէկ ամեն մի պուղ նաւի համար, որ դուրս կը գալ այդ հողերից: Առաջին դէպքում, վիճելի հողը մնում է իբրեւ լրակատար սեփականութիւն 125,000 ռուբլի վճարողին, իսկ երկրորդ դէպքում՝ հողը համարվում է նրան կապաւոր տրված:

«Kaeni» լրագիրը հաղորդում է, որ Անդրկասպեան երկիրը գնացին 21 բժիշկ, 3 կին-բժիշկ, 11 ֆէլդշեր՝ տանելով իրանց հետ դեղեր և այլ բժշկական պատրաստութիւններ:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅՑ մեզ գրում են. «Կարս» Թիֆլիսեան երկաթուղու գիծն արդէն հասել է մեր դատար: Գնացքները գալիս են մինչև Աշլախ գիւղը (50 վերստ քաղաքից), ուրեմն եթէ գործը աշուղ գնայ, շատ շուտով Երևանի դաշտը կը կապվի լուսաւոր աշխարհների հետ:

Թեոֆիլոսի Թեոֆիլոսի մեզ գրում են. «Թեոֆիլոս» յում 100-ից աւելի հայ ընտանիք կայ, բացի Թիֆլիսեաններից, որոնք մեծ մասը չունենր գաւառ են պատկանում: Թիֆլիսեանները տարի այդ չունենորներին բաժանվում է 300 ռուբլի, որ տալիս է տիկին Բէրբէրեան իր ամուսին Լաւրար Բէրբէրեանի կտակի համաձայն, բայց և այնպէս, այս նպատակը ընդ լինելով չէ ծածկում կարիքը, ուստի անցեալ տարի Թեոֆիլոսի հասարակութեան մէջ միտք յղացաւ կազմել աղքատ ախուրաւ հոգաբարձութիւն Թեոֆիլոսի Ս. Սարգիս եկեղեցու անունով: Հոգաբարձութեան պարտականութիւնն է նուէրներ հաւաքել և այլն: Եւ անհ, անցեալ մայիսին, հայ հասարակութիւնը, քահանայի միջոցով, ուղարկեց մի խնդրագիր, հետը հոգաբարձութեան կանոնադրութիւնը: Բնաւարդայի լիմեական կոմսիտօրիային՝ Քիշինով, խնդրելով, որ կոմսիտօրիան իրենց հարաւորներին և միջնորդի այս գործը ի կատար ածելու: Բնաւարդայի լիմեական կոմսիտօրիան այդ առթիւով զիմել է ներքին գործերի միջնորդութեանը Այժմ, ինչպէս հասարակութեան է «Երեւան» լրագիրը, ներքին գործերի միջնորդութիւնը կանոնադրութիւնն ուղարկել է Տաւրիկեան նախագահութեան խնդրելով նրանից տեղեկութիւններ: Թեոֆիլոսի հասարակութիւնը սպասում է գործի վախճանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԷՆ

ՊԱՐՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Պարտական արժեքներ վիճակ, նրա մի քանի տեղերում ծագած խռովութիւնները՝ հայի

Թանգութեան և սովի պատճառով, երկրի տընտեսական քաղաքական առիթ են տուել եւրոպական և ուստաց մամուլին զանազան յօդուածներ նուիրել այն հարցին, թէ ինչ պէտք է լինի այդ երկրի վաճառքը: Յօդուածագիրները գալիս են այն եզրակացութեան, որ շատ շուտով կարող է ծագել Եւրոպական ժառանգութեան խնդիր:

Մի առաջընթաց, մի մեծ առաջնորդող յօդուած նուիրելով այդ հարցին, այն միտքն է յայտնում, որ մինչ Եւրոպան ստիպում էր թիւրքային թէֆթերներ մտցնելու իր երկրի մէջ և բարձրել իր բրնձի տնտեսական վիճակը, Պարսկաստանը, հեռու մնալով արեւմտեան պետութիւնների քաղաքական կեանքից, որ և է հրահանգ կամ ուղղորդում չէ ստանում թէֆթերներ մտցնելու մասին: Թողնելով ինքն իրան, նա, ինչպէս և բոլոր մահմեդական պետութիւնները, չը գտաւ իր մէջ ոչ մի բնական աճման համար: Հանգուցեալ Շահի ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա և նրա ծանօթութիւնը քաղաքական վիճակն հետ վերջացաւ միայն նրանով, որ մի քանի նոր պաշտօններ հաստատվեցին, որոնք թէև վերցրած էին արեւմտեան երկրների պետական կազմակերպութիւնից, բայց չէին համապատասխանում երկրի պահանջներին և նրա ոգուն: Վերջին 20—30 տարիների ընթացքում աւելի սաստիկ եղաւ ներքին վիճակի անկումը. այդ անկումը շարունակվում է և այժմ:

Երկրի մէջ չը կայ օրէնսդրութիւն. բոլոր գործերը վճռվում են վարչութեան հայեցողութեամբ, իսկ կարևոր դէպքերում՝ Շահն է վճռում: Պետական գանձարան չը կայ. ժողովրդից հաւաքած հարկերը և պետական այլ տուրքերը կազմում են Շահի անձնական սեփականութիւնը, որ և ծախսում է իր ցանկութեան համաձայն: Գործադարութեան այդպիսի եղանակի ժամանակ անհրաժեշտ է, որ երկրի կառավարչը ստիպւի մօտիկ ընդունի նրա շահերը, իսկ վարչութիւնը մեծ չտակալութեան և ընդունաւորութեան տէր լինի: Վարչութիւնը վաճառվող է, սկսած ստորին ոստիկաններից մինչև Շահի ամենամօտ ազգականները: Նահանգապետների պաշտօնը ծախվում է անդրով և հասկանալի է, որ ստանալով մի նահանգ՝ կառավարելու համար, նահանգապետն աշխատում է մի տարվայ մէջ յետ ստանալ իր ծախսերը և ապահովել իրան ապագայի համար: Պետութեան գլուխն անհրաժեշտ է հարկաւոր դէպքում զուգի իր հպատակներին, որովհետև զօրք չունի, այսինքն թղթի վրա զօրքը գրելով ինչ ունի, բայց որովհետև Շահը ճշգրտեալ չէ վճարում նրան աւճիկ և, բայց զրանից, վճարածն էլ անցնելով բոլոր ինտանցիաներից, կամայ կամայ հալվում է և շատ նուազ քանակութեամբ հասնում զօրահանգի պետին, ուստի զօրքը՝ ներկայացնում է իստեմիճադան՝ մարդկանց մի կոյտ, որոնք իրանց ապրուստի համար, ստիպված են պարտաւիճակութեամբ և զանազան արհեստներով:

Կեղեքված և հարստահարված ժողովուրդը բոլորովին քանդված է և կորցրել է որ և է հասկացողութիւնն ազգային պատուի մասին: Կառավարութիւնը եթէ նոյն իսկ կամենար օգնել կարօտ ժողովրդին, չէ կարող այդ անել, որովհետև Շահն մի ժամանակ անուսկալական համարված դանձր բոլորովին սպառվել է: Ակամայ ժողովրդի աչքերն ուղղվում են Հիւսիսի դէպի Ռուսաստանը, կամ Հարաւի դէպի Անգլիան: Երբեք, Համադանում և ուրիշ տեղերում արդէն եղել են ժողովրդական խռովութիւններ: Այդ բոլորը ստեղծում է մի այնպիսի վիճակ, որ հերթական է չինում Եւրոպական ժառանգութեան հարցը:

4. ՊՈԼՍԻՑ ՄԵԿԵԼԸ

Մայրաքաղաքը՝ Երզնքըն է: Պոլսի թղթակցներն այսպէս են նկարագրում Վիլհելմ II-ի հեռանալը Կ. Պոլսից.

«Այդ առաւօտականից երբեք-Քիօսում նկատվում էր մի ինչ-որ զղարկալար: Մի սենեակից միւսն էին մտնում կամ դուրս էին հանում արեւըներ, կայքոյներ. պաշտօնեաները, որոնց հետ և Օսման-փաշան, տանում էին ինչ որ տարօրինակ պատկաններ, սուլթանի թիկնապահները դէս ու դէն էին վազվազում. իրանք էլ չիմանալով թէ ինչու: Բնատուն ինքը տոկոսը կարող էր լինել, որոնք ուղում էին ցոյց տալ, թէ իրանք երբեք-Քիօսում տանում մարդիկ են և զրանց կարգադրութիւններից ոչ մէկը միւսին հետ չէր կապվում: Բայց ահա կորրիդորում երևաց սուլթանը և հրամայեց, որ բոլոր իրերը տանեն իր առանձնատանի մօտ եղած դահլիճը ու գարսն զրանք սուլթանի ընծաներն կան չը կար, թէ զրանք սուլթանի ընծաներն

են իր թանկագին հիւրերի համար: Տալով իր հրամանը, սուլթանը նոյնպէս շտապով գնաց իր առանձնատանի: Վսիկ ետ, առում է թղթապիշ, շտապեցի մօտենալ սուլթանի սրբիկ բէլին, խնդրելով մտցնել ինձ դահլիճ, որպէս զի տեսնեմ ընծաները: Բռնելով իմ թիկն, բարեկամ տարաւ ինձ մի երկար կորրիդորով, որ ծածկված էր հարուստ գորգով ու մուգեղ գանձերով: Երկար սեղանների վրա, որոնք ծածկված էին ոսկով հիւսած սիւսերներով, սկսեցին դարձնել ներս բերվող իրերը, որոնց մէջ առանձին ուշադրութիւն էր գրառւում իր վրա՝ թէ իր արժողութեամբ և թէ չբեղութեամբ մի չքեղ ապարանջան՝ խոշոր թանկագին քարերով, որ նշանակված է կայսրուհու համար և գնահատված է երեսուն հազար լիւրա. ահալին չափերով երեք մետրանոց գորգ. մի գորգ, որ ամբողջապէս ոսկուց է հիւսված և որի վրա հարեմի բոլոր չէրեքուհիներն աշխատել են վեց տարի. այդ գորգը գործել էր տեղի սուլթանի մայրը, որպէս իր որդու դահլիճալիքեան քան և հինգ ամառ յօբելանսին (երկու տարուց յետոյ) ընծայել նրան, մի հարուստ մարմնայ մուշտակ կայսրուհու համար, նա պատուիրված է Լոնդոնում տան հազար լիւրայով. մի սուր, որ զարդարված է թանկագին քարերով. հին, ոսկեպատ զէնքերի մի ամբողջ ժողովածու. թիւրքական հարուստ, ոսկեպատ թամբ, խալիկան պատկերներով նկարած երկու փառահեղ պատկերներ, որոնք մինչև այժմ զարդարում էին սուլթանի առանձնատանի, բայց այժմ ուղարկվում են Բեռլին, որովհետև դուր են եկել հիւսիս: Սրանք էին Վիլհելմ կայսրի ստացած ընծաները:

Վեստֆալի գերմանական կայսերական զոյգը Ալեքսանդր-Մեքայից եկաւ Երբեք-Քիօս և սուլթանի ուղեկցութեամբ մտաւ մարշալական դահլիճը: Բնուցներով ընծաները, ուշադրութեամբ տնդողով նրանց և գովելով թիւրքական չքեղութիւնն ու ձեռքաշուրք, նոցա մեծութիւնները բազմիցս շնորհակալութիւններ ցուցանեցին ընդունելու իրենց, ուշադրութեամբ, յոճանքի, համակրութեամբ համար: Նոյն ժամին իրերը խնամքով դարձվեցան և Մահմուդ փաշայի հրահրութեամբ ուղեւորվեցան երկաթուղով Բեռլին:

Փամի չորսին Վորա-Բալչէի պալատում տեղի ունեցաւ ճաշկերպը, որին նշարկված էին թիւրք և օտարերկրացի բարձր պաշտօնեաները: Սուլթանի ձախ կողմին նստած էր կայսրը, իսկ աջ կողմին՝ կայսրուհին: Ճաշի ժամանակ վեհապետներն տրախ խոսում էին սուլթանի թարգման Մուհի-փաշայի միջոցով: Կենացները չը կային, բայց ճաշի վերջում կայսր Վիլհելմը շամպային բաժակը ձեռքն առնելով կանգնեց և դիմելով իր բարեկամ տամախորձը՝ ասաց. «Թող ներել ձեր մեծութեան հիւրընկալ յարկը, ես և կայսրուհին տանում ենք մեզ հետ ամենալաւ յիշողութիւններ: Եւրոպական երեք ձեռքերով, ձեր մեծութիւն, և ձեր ժողովրդից այն սրտազին ընդունելութեան համար, որը մենք երբեք, երբեք չենք մոռանալ: Խմում եմ ձեր մեծութեան կենացը: «Համարի՛ք» քայլերը, որ հետեց կայսրի վերջին խօսքերին, բոլոր ներկայ եղողները լռեցին, ոտքի կանգնած:

Փամի հիւրերը քառասուն և հինգ քայլ անց նոցա մեծութիւնները երևացին պալատական նաւամատոյցի վրա, որտեղ պատրաստ էր սուլթանական զոգեմակարկը բարձր հիւրերին: Հօհեցողութիւնն նախ հասցնելու համար: Սուլթանը պալատից դուրս եկաւ Աւգուստա կայսրուհու հետ թեւանցելու, ամենաքննադէպ նրան մակրկի մէջ և համարեց կայսրուհու մեկնած ձեռքը: Տանիքներու բառարաններից թողնաւ թաճութիւն սկսվեց, որ յայտարարում էր, թէ միապետները հրամայել ողջուն են տալիս միմեանց: Շար ընկած զօրքերի երամուտութիւնը նուազեց դերմանական հիմքը, իսկ ժողովուրդը բարձրաձայն առաջաւ աղաղակներով հրամայել ողջուն էր ուղարկում բարեկամ հիւրին, որ կարողացել էր հիացնել ամենքին: Կայսրուհին արտասովեց և հարկադրված էր թաշկինակի օգնութեամբ ձածկել իրան յուրազ զղացմունքները: Կայսրը, ուղղելով իր վայելքը կերպարանքը, ողորմաբար թիւրքական սովորական ձեռքով «խօշկելի» էր անում: Շոգեմակարկը հանդարտ հեռացաւ դէպի «Հօհեցողութիւն», որ պատրաստ էր ընդունելու իր սիրելի: Կայսերական դրօշակը պարզելով, նաւը հպարտութեամբ առաջ գնաց: Սուլթանը դեռ երկար կանգնած էր նաւամատոյցի վրա:

Տ Մ Շ Օ Դ Ե

Նեղոսի վերին կողմերում գտնվում է մի չինջին և ողբերկ բաղաբ, որ ունի մասնաջուկի մայ և որի անունն է Ծաշոյա: Աֆրիկայի այդ

կարած անյայտ անկունն այժմ դառնում է համաշխարհային հետաքրքրութեան առարկայ, որովհետև եւրոպական երկու պետութիւններ ուղարկում են իրանց թաշկինակը: Մեր ընթերցողներին յայտնի է, որ գերմանական Վիլհելմը, Սիգուարմանը գրաւեց յետոյ, առաջ անցաւ իր նուաճումները տարածելու համար, բայց տեսաւ որ Ծաշոյայում արդէն հաստատվել է ֆրանսիական մի փոքրիկ զօրաբաժին: Մարշալի առաջնորդութեամբ: Զր կարողանալով դուրս անել ֆրանսիացիներից այդ քաղաքից, Վիլհելմը քաղաքապետական ցոյցեր արաւ Մարշային, և անդիմադրելու դրօշակ բարձրացնելով ֆրանսիական դրօշակի կողքին հեռացաւ Ծաշոյայից, վէճի լուծումը թողնելով գերմանական Վիլհելմին: Ֆրանսիական և անգլիական կառավարութիւնների մէջ սկսվեց պայքար: Անգլիան, որ այս դրոշակ կանգնած է Նիլոսի մէջքի ետևում, հաստատում է, որ Ծաշոյայում փարաօնների երկրի սեփականութիւնն է, հետեւեալով այդի որ արաւի անգլո-եգիպտական զօրքերով. իսկ ֆրանսիան խստովանում է, որ իրան հարկաւոր է աֆրիկեան գաղթականութիւններից ճանապարհ քայլ անել դէպի ծովը և այդ պատճառով հարկադրված պիտի լինի Ծաշոյայի իրանը համարելու: Միջադրային իւրաքանչիւր հարց, եթէ վերաբերվում է նոյն իսկ ամենահին տեղերին, այժման ժամանակ ներկայացնում է անալիզի դժուարութիւն, քանի որ հարցը այնքան վէճի ենթարկված տեղի չէ վերաբերում, որքան վիճող կողմերի ազդային պատուին: Զիջումներ անել՝ նշանակում է, ըստ այժման հակադրութիւնների, խստովանել իր թիւրքութիւնը. իսկ սա ամենամեծ վիրաւորանքն է, որ չէ կարող տանել ժամանակակից հայրենասիրութիւնը: Ահա այդ իսկ պատճառով համաձայնութիւն չէ կայանում ֆրանսիայի և Անգլիայի մէջ. և արդէն տեղեկութիւններ են գալիս, թէ երկու կողմերն էլ եռանդով պատերազմի պատրաստութիւններ են տեսնում: Յարաբերութիւնները լարված են. և միթէ երկու քաղաքակրթութիւն մեծ աղբիւր իրանց ահաւոր թնդանութիւնը կազդէ միմեանց դէմ մի ճանաչող, չնայն Ծաշոյայի պատճառով. միթէ Աֆրիկայի մէջ այլ ևս տեղ չէ մնացել, որ եւրոպական ազգերը կարողանային առանց միմեանց հետ ընդհարվելու դարձանել իրանց դաղթականական ձեռնարկութիւնները: Ժամանակակից եւսամոլ և շահաւոր քաղաքականութիւնից այդ էլ կարելի է սպասել: Ոչինչ դարձանայի բան չի լինի, եթէ Նեղոսի վրա գտնվող մի անյայտութիւն այնքան զրգուէ անդիմադրելի է, որ նրանց թնդանութիւնը կը սկսեն իրանք իրանց պայքար և արեւը դեռնելով վաղէ: Եւ այդ բանը տեղի կունենայ այնպիսի մի ժամանակ, երբ աշխարհի վրա բազմաթիւ հարցեր կան, որոնք խեղդված են պետութիւնների նստով քաղաքականութեան շնորհիւ, բայց անհամեմատ մեծ նշանակութիւն ունեն հանրամարդկային շահերի տեսակետից:

ՆԱՄԱԿ ԻՏԱԼԻԱՅԻՑ

Միւսին, հոկտեմբերի 27-ին
Հռոմում, հոկտեմբերի 18-ին, սկսվեց դժբաղդ Կալաբրիտիի և Մալոյայի մէջ տեղի ունեցած մեծամարտութեան դատը և տեղի ամբողջ եօթն օր: Երկար, գեղեցիկ ճառերից յետոյ, դատարանը Մալոյային ութ ամսվայ բանտարկութեան ենթարկեց, իսկ սեկունդանտներին ազատ արձակեց: Կատարեալ կատակերգութիւն:

Վալի կայ, որ ներկայ կառավարութեան բռնադատութեան կարող է կրկին խռովութիւններ առաջ բերել. չափից դուրս մեծ հակողութիւն կայ բոլոր առաջադէմ կուսակցութիւնների վրա: Ներկայ Իտալիան բոլորովին կորցրել է իր լայն նաճաւ ազատութիւնը, որը այնքան մեծ դրնով էր ձեռք բերել: Մօտ օրերս կը բացվի պատգամաւորների ժողովը, որ երկի տեղի կունենան մեծ ընդհարումներ: Ժողովուրդը սաստիկ զրգոված է կառավարութեան բռնած ընթացքի դէմ, իսկ միւս կողմից, կառավարութիւնը ջանք է թախում ճնշելու հակառակ կուսակցութիւնները: Այնտեղ է հասել գործը, որ «Avanti» կոչված սոցիալիստական օրգանը այլ ևս անկարելի է կարգաւ փողոցում, դադարի ստիպանքները նսկում են վերոյիշեալ լրագրի կարդացողներին: Տեսնեք մինչև ուր պիտի հասնին այդ խռովութիւնները:

Յայտնի պատգամաւոր Turati նորից ընտրվեց պատգամաւոր և այս անգամ աւելի մեծ յաղթանակով: Յոյս կայ, որ կարճ ժամանակամիջոցում ապառվեն մայիսի 6-ի խռովութիւնների ժամանակ բանտարկվածները: Այդ ուղղակի իրերը հատարակութիւնն է ցանկանում:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Սալ մասուն, հոկտեմբերի 15-ին
Ահա երկու ամիս է, որ զարձեալ վերվայր է յուզված ամբողջ Սարմատի գաւառը. Հայ հղաչողները տարէնը երկու անգամ, գարնան և աշունքին, մի լաւ պատրուակ է անդամ լե անողը հարստահարիչների համար իրանց դատարկված գրգանքները լեցնելու: Այս առթիւ երգված երգը միշտ մի և նոյնն է և երբեք չի փոխվի. «Զեք գիւղից դաչաղ է անցել գիւղերը և դուք չէք տեսնել ու կառավարութեան իմաց տուել. 300 թուան պիտի տաք. քսան ֆէդայի էք պահել, կերակրել ու խնամել, 1000 թուան պիտի վճարէք, որովհետև իլիլիզադ (խոտոմիսգիր) տուած էք կառավարութեանը, որ ոչ մինը պիտի չը պահէ. Զեք գիւղից դաչաղ է (մինչդեռ անցալիւր ծոցին է ման գալիս), 100 թուան վճարելու էք. Զեք գիւղում մի և և քիտաւարը է ապրում, որի պիտեղը պրած են եղել, մօրուքը կարճ, մաղբը սանդղած, գիւղին եւրոպական գլխարկ, դա անկասկած դաչաղ է, 50 թուան պէտք է տաք և այն, և այն, և այն, միով բանիւ փող, փող և դարձեալ փող: Սարմատի և Թոյի կառավարիչ Զարդամն անցեալ օր բոլոր գիւղերից ախտախկաւ և Երևան կանչել էր Վրիլման, որ այս երգը երգէ նրանց, բայց երբ տեսաւ որ օգուտ չի բերում, սկսեց մի առ մի կանչել նրանց՝ բանտարկել, չլիլայի դարնել տալ և չարարել, որ փող դուրս հանի նրանցից: Այդ վիճակին ենթարկվեցին նաև քանահայր և ուսուցիչը: Թէ որդիս փող ձեռքին այդ տղրուկները արդէն արեւնաքամ եղած ժողովուրդից, որ թանգութեան պատճառով մինչև անգամ իր երեխաներին հաց չէ կարող հայթայթել, այդ միայն անուաւոր ընտելութեամբ կարելի է պարզել: Բայց ով պիտի կատարէ այդ ընտելութիւնը, քանի որ դեռ հարցնող չը կայ այդ մասին: Կարեան վարդապետը դիմելով Սարմատի վարդապետ ազատել բանտից Սարմատի քանահայր և Հաֆիճի ուսուցչին առանց փրկանքի, բայց ով պիտի աղաղի ժողովուրդին առանց սովորական կաշառք տալու, ահա այդ է հարցը: Կամայ-կամայ անցնում են տարիները, իսկ ժողովուրդի համար չը կայ ոչինչ նոր, այլ կրկնվում է երկը միշտ այսօր. Եւ շարունակվում է երկրի աւերումը, ամալի ու անապատ են դառնում չէն ու չորքով հայ գիւղերը, վասն զի հայ երկրագործը թողնում է իր հողն ու ջուրը, տուն ու տեղը և գնում է օտարութիւն դէմ իր գաւազաց համար մի կտոր չոր հաց ձարելու: Հէնց այս տարի շատ ընտանիքներ գնացին իրանց տեղերի մօտ և այլ եւ չեն վերադառնալու: Բոստով մի երկրորդ Սարմատ է դարձել, այնքան ժողովուրդ կայ այն տեղ այս կողմերից: Անցնել է որ կառավարութիւնը սրտանց դոճ է այդ բանից, այսինքն՝ որ հայերը գաղթին, ուստի լինին իր գիւղից: 25 որ Սարմատում հեռացրել էր վերջերս Սալմայի ժողովուրդին՝ հեռւ հնազանդվեցէք, ձեք աղային (անհրաժեշտ Մաշադի-Թաղին), կամ դուրս պէտք է ելէք այդ գիւղից, մինչդեռ նրանք բոլորում էին զրկանքի, հարստահարութեան և անտանելի անիրաւութեան դէմ և ինքնորում իրանց գիւղը բնակալից ծախաւ առնելով Շահին փէ շքէշ անել: Եւ գիտեք ինչ է այդ մեծ գիւղի իսկական արժէքը, 100,000 թուան!!!

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Պարիզից ստացված լուրերին նայելով, այնտեղի տեղեկալ չըլաններում հաւատացնում են, թէ կոմս Մուրավիևի և ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դեկաստէի մէջ տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն սուլթանի կողմից Հայաստանին խոտոացած բէֆթերների մասին: Մանրամասնութիւններն առ այժմ յայտնի չեն:

Կ. Պոլսից հեռագրում են «Daily Mail» լրագրին, որ մայրաքաղաքի փողովուրդը պատկիւր կը կոչված են ափիշներ, որոնց մէջ ինքն կերպով պարտաւարկում են սուլթանի արած ահալին ծախսերը Վիլհելմ կայսրի ընդունելութեան համար: Այդ աֆիշները կարված են և զանազան մկիթների մէջ: Հեղինակներն անյայտ են:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 հոկտեմբերի: Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ՝ նորից թոյլաւորված է «КОВЕНСКО» լրագրի հատով ծախելը: ՊԱՐԻՑ, 24 հոկտեմբերի: Մինիստրների խորհուրդը դադարեց Ծաշոյայի հարցով: Խորհրդակցութեան հետեւեալները զադակ են պահ:

